

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ. 2002թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ աճել է 23.6 %:

Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2002թ. հունվար-փետրվար	2002թ. հունվար-փետրվարը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %	2002թ. փետրվար	2002թ. փետրվարը 2002թ. հունվարի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա	644.0	123.6	386.4	150.0
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	207.3	145.2	115.0	124.6
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ	17.1	71.3	6.4	59.8
ներկրվել են բեռներ	149.3	138.5	78.8	111.8
ներհանրապետական փոխադրումներ	40.9	3.7անգամ	29.8	2.7անգամ
ավտոտրանսպորտով	244.2	141.2	181.4	2.9անգամ
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ	12.1	126.0	7.1	142.0
ներկրվել են բեռներ	29.6	82.7	14.6	97.3
ներհանրապետական փոխադրումներ	202.5	158.7	159.7	3.7անգամ
օդային տրանսպորտով¹	1.1	68.8	0.6	120.0
<i>որից</i>				
արտահանվել են բեռներ	0.4	57.1	0.2	100.0
ներկրվել են բեռներ	0.7	77.8	0.4	133.3
խողովակաշարային տրանսպորտով	191.4	94.1	89.4	87.7

Երկաթուղային տրանսպորտ. 2002թ. հունվար-փետրվարին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ աճել է 45.2%: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 72.0% (2001թ. հունվար-փետրվարի 75.5% դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 8.3% (նախորդ տարվա հունվար-փետրվարի 16.8 % դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 19.7% (նախորդ տարվա հունվար-փետրվարի 7.7 % դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2002թ. հունվար-փետրվարին 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ քիմիական և հանքային պարարտանյութերի փոխադրման ծավալն ավելացել է 27.1անգամ, սև մետաղներինը՝ 4.0, հանքային շինարարական նյութերինը՝ 3.0 անգամ, հացահատիկի և աղացվող մթերքինը՝ 87.5%, նավթ և նավթամթերքինը՝ 4.8 %: Սև մետաղների ջարդոնի փոխադրման ծավալը նվազել է 95.5%, ցեմենտինը՝ 36.8%.

Վազոնների միջին օրական բեռնաթափումը 2002թ. հունվար-փետրվարին կազմել է 50 վազոն և 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ ավելացել 18 միավորով, իսկ բեռնումը կազմել է 17 վազոն և ավելացել 6 միավորով: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 10.2 օր և 2001թ. նույն ցուցանիշի նկատմամբ արագացել է 6.0 օրով:

Ավտոմոբիլային տրանսպորտ. 2002թ. հունվար-փետրվարին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2001թ.

¹ *Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:*


1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

հունվար-փետրվարի ցուցանիշի նկատմամբ աճել է 41.2%, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 12.1% (2001թ. հունվար-փետրվարի 20.7% դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 5.7% (նախորդ տարվա հունվար-փետրվարի 7.0% դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 5.0% (նախորդ տարվա հունվար-փետրվարի 5.5 % դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 2.5% (նախորդ տարվա հունվար-փետրվարի 10.4 % դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 82.9 % (նախորդ տարվա հունվար-փետրվարի 73.8 % դիմաց):

Օդային տրանսպորտ. 2002թ. հունվար-փետրվարին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2001թ. հունվար-փետրվարի ցուցանիշի նկատմամբ նվազել է 31.2%, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 63.6 % (2001թ. հունվար-փետրվարի 56.2 % դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 36.4 % (2001թ. հունվար-փետրվարի 43.8 % դիմաց):

Խողովակաշարային տրանսպորտ. 2002թ. հունվար-փետրվարին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-փետրվարի ցուցանիշի նկատմամբ նվազել է 5.9 %:

2002թ. հունվար-փետրվարին բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին տեսակների (տոկոսներով)



2001թ. հունվար-փետրվարին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 27.4 %, ավտոմոբիլայինը՝ 33.2 %, օդայինը՝ 0.3%, խողովակաշարայինը՝ 39.1 %:

Բեռնաշրջանառություն. 2002թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ նվազել է 0.8%:

Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


	2002թ. հունվար-փետրվար	2002թ. հունվար-փետրվարը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %	2002թ. փետրվար	2002թ. փետրվարը 2002թ. հունվարի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ այդ թվում՝	318.5	99.2	156.1	96.1
Երկաթուղային տրանսպորտով	54.3	134.7	30.6	129.1
ավտոտրանսպորտով	5.8	96.7	4.8	4.8անգամ
օդային տրանսպորտով	0.9	81.8	0.4	80.0
խողովակաշարային տրանսպորտով	257.5	94.1	120.3	87.7

Ուղևորափոխադրումներ. 2002թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-փետրվարի ցուցանիշի նկատմամբ նվազել է 4.3 %:

Ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2002թ. հունվար-փետրվար	2002թ.հունվար-փետրվարը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ,%	2002թ. փետրվար	2002թ.փետրվարը 2002թ. հունվարի նկատմամբ,%
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝	23302.9	95.7	11719.7	101.2
Երկաթուղային տրանսպորտով	130.4	112.5	67.5	107.3
ավտոտրանսպորտով	19641.4	99.4	9852.2	100.6
օդային տրանսպորտով ¹	95.0	115.0	43.7	85.2
էլեկտրատրանսպորտով	3436.1	78.1	1756.3	104.6

2002թ. հունվար-փետրվարին ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին տեսակների (տոկոսներով)



2001թ. հունվար-փետրվարին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.5%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 81.1%,

¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:

օդային տրանսպորտինը 0.3% և էլեկտրատրանսպորտինը 18.1%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2002թ. հունվար-փետրվարին կազմել է 61.8 %, իսկ տրոլեյբուսով՝ 20.7%, տրամվայով՝ 14.8% և ճոպանուղով՝ 2.7 %:

Ուղևորաշրջանառություն. 2002թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ նվազել է 6.7 %:

Ընդհանուր ուղևորաշրջանառության ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2002թ. հունվար-փետրվար	2002թ.հունվար-փետրվարը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %	2002թ. փետրվար	2002թ.փետրվարը 2002թ. հունվարի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղ-կմ այդ թվում՝	341.9	93.3	170.0	98.9
Երկաթուղային տրանսպորտով	6.4	133.3	3.7	137.0
ավտոտրանսպորտով	231.9	87.4	115.9	99.9
օդային տրանսպորտով	89.2	114.8	43.0	93.1
էլեկտրատրանսպորտով	14.4	77.0	7.4	105.7

Տրանսպորտային պատահարներ. Հանրապետությունում 2002թ. հունվար-փետրվարին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների , ճանապարհատրանսպորտային պատահարները 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ նվազել է 0.8 %:

Ճանապարհատրանսպորտայինպատահարների ցուցանիշները

	2002թ. հունվար-փետրվար	2002թ.հունվար-փետրվարը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %	2002թ. փետրվար	2002թ. փետրվարը 2002թ. հունվարի նկատմամբ, %
Ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհամենը	123	99.2	63	105.0
Զոհվել են, մարդ	23	76.7	8	53.3
Վիրավորվել են ,մարդ	145	98.0	73	101.4